Կ'իրիշկիմ՝ աչքիր չինու կթխայ[1]) էր,
Խանդիւթ խաթնի աչքիր չինու կթխայ էր.
Կ'իրիշկիմ՝ ճակտու լէնքն էլ էրկու թիզ ու կէս էր,
ա՜խ հալա էրկու թիզ ու կէս էր.
Կ'իրիշկիմ՝ էնու ընքիր[2]) կամար էր,
ա՜խ հալա կամար էր.
Կ'իրիշկիմ՝ իրիսը կարմրութին նռան գինի էր,
ա՜խ հալա նռան գինի էր.
Կ'իրիշկիմ՝ էնու վիզի յերկնիւթ[3]) էրկու թիզ էր,
ա՜խ հալա էրկու թիզ էր.
Կ'իրիշկիմ՝ էնու սիպտկուութին կիզած[4]) բամբակ էր,
ա՜խ հալա կիզած բամբակ էր.
Կ'իրիշկիմ՝ ծրծիրն էր մաչ ծուցին, քեանց Հալաբայ շաքար
քեաղցր էր,
ա՜խ հալա քեաղցր էր»։

Զէնով-Ցեովան էլաւ, զաշըղքիր տփից, սազիր առից, էզար գետրն, կուտրից։

Աշըղքիր լացին, կեացին մաչ քեաղքին։ Դաւիթ իրի դէմ. Համայ աշըղքիր Դաւթին խէր, մէր կ'քեաշին[5]), կան կ'կեան մեանչ քեաղքին։

Դաւիթ էսաց.—Ա՜յ ջանմ, տիւ ինչի Դաւթին խէր, մէր կ'քեաշէք։

Էսաց.—Խանդիւթ խաթիւն Դաւթի համա կեովացինք, զմի ծիծից, սազիր կուտրից, ճամբխու իտի։

Էսաց.—Դաւիթ, որ կ'խարցնէք, իսն իմ, մարդ չէ։

Դաւիթ կինաց, էրկու սազ առից, տուից աշըղքիրուն. մէկ թաս ոսկի էլ տուից աշըղքիրուն բաշխիշ[6]), էսաց.—Կեացէք, Դաւթի խօր օղորմը տուէք, յիշունց մի՛ տէք.

Էսաց.—Կեացէք, Խանդիւթ խաթիւնին ասէք՝ իրիք օր էս-

---

[1]) Բաժակ։ [2]) Ցօնք, ունք։ [3]) Երկայնութիւն։ [4]) Գզած, մաքրած։ [5]) Հայհոյել։ [6]) Ընծայ։